

Հայերն ալ այս տառապող Արեւելքը յուսադրող ընդհանուր շարժումին իրենց մասնակցութիւնը բերած են և միամիտ ցանկութիւններէ տարուած:

Հոկտ. 1664ին Երեւան գումարուած մեծահանդէս ժողովի մը մէջ — որուն կը մասնակցէին ժամանակակից 27 յայտնի եկեղեցականներ, որոնք Յակոբ Զուղայեցի կաթողիկոսին դէմ դժգոհութիւններ ունէին — կազմուած էր 17 կէտերէ բաղկացեալ ամբաստանագիր մը, որուն 16րդը շատ ուշագրաւ է: Հոն գրուած է. «զի սնապարձ եւ բաղայօղ բանիւ պատճառեաց ի դէմս աշխարհի ի Ս. Երուսաղէմ գնալ եւ գաղսագողի խորհրդեամբ բարձեալ ընդ ինքեան ըզնեխար Սրբոյն Հռիփսիմեայ եւ Գայեանեաց կամեռ սանիլ յերկիրն Ֆռանկաց եւ այնու առնուլ բազում գանձս ի նոցանէ եւ գալ օժանել զումն քաղաւոր Հայոց ընդդէմ ի յառաջագոյն պարսից» (անտիպ նամակ՝ Երուսաղէմի վանքը պահուած): Անոնք կը խորհրէին Եղիազարէն, որ ցաւելով «աղնասանաց Ս. Արքունոյն Էջմիածնայ եւ բոլոր սանս Հայոց» յօժարի երթալ կամ Թէոդուկոլիս կամ Թոգատ և կամ ուր որ ինք կամենայ և ամէնքը մօտը կոչելով դատաւոր կանգնի և լսէ իրենց ամբաստանութիւնները: Ապահովաբար այդ դէպքին արձագանգն են Զաքարիա Սարկաւազի (Բ. հտ. էջ 71) այն տողերը, ուր կ'ըսուի թէ քանի մը միաբաններ, գլխաւորութեամբ «Կարկուտ» մականուանեալ Ոնոփրիոս վրդ. Երեւանցիի, «գրեցին բազում հայիոյանօք սուսս» ընդդէմ Յակոբ կաթողիկոսի և Եղիազարը հրաւիրեցին Էջմիածին, խոստանալով անոր տալ Էջմիածինի կաթողիկոսութիւնը (տես Օրմանեան, Ազգապատում, էջ 2550):

Անտարակոյս, սեւցնելու համար Յակոբ Զու-